հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հրայր և Աննա Հովնանյան
ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Ա. Ալավերդյան

044/7589-11
18.03.2011թ.

ՆԱԽԱԳԻՇ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2011 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա 4/7.9

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-177-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Պարոյր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրու թիվ 6 մանկապարտեզի հովանավորում» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 8-ին կնքված՝ N 120630 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011-2012 թվականների ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 255000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2007 թվականի մարտի 20-ին կնքված՝ N 02203074772 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011-2012 թվականների ընթացքում բնական գազի մատակարարում՝ տարեկան 700000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շիրակ ջրուղկայրուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 1-ին կնքված՝ N 402719530 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011-2012 թվականների ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 80000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

4/7.9

0010, Երևան, Մեխ-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

12.03.2011 թ. № 3/3.8-1/2358-11

Ձեռ N» _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.03.11թ. N 15/15.6/3129-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. մարտի 19-ի N Մ-177-Ա (<<ԱՌԴԱ>> բարեգործական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ <<ԱՌԴԱ>> բարեգործական հիմնադրամի կողմից ներկայացված նամակի 3-րդ կետում նշված է <<Արմենտել>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը, որը նախագծում նշված չէ և կից պայմանագիրը բացակայում է:

Հարգանքով

Ատոմ Ջանջուրազյան

034/6743-11
12.03.2011 թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 4/7.9


0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 3-4/1337-11
11.03.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.03.2011թ. թիվ 15/15.6/3129-11 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N ՍՄ-177-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ԱՌ-ԴԱ» բարեգործական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:


Ա. Աղաճյան

044/6594-11
11.03.2011թ

Տ Ե Ղ Ե Կ Կ Ա Ն Բ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N ՍՄ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրին
հարակից գործարքների մասին («ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և
դիտողությունների վերաբերյալ

Հիմնավորում	Որոշման համաձայն
Իրավաբանական	Ստորագրված
Ստորագրող	Ստորագրող
Ստորագրման ամսաթիվ	Ստորագրման ամսաթիվ

4/7.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
մարտի 2011 թվականի N Ս - - Ա
քաղ. երևան

4/7.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N ՍՄ-119-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 16-ի N 3/3.8-1/2507-11 և
Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների
կոմիտեի 2011 թվականի մարտի 11-ի N ԱԱ/3-4/1336-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով
նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011
թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության
հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀՕՀՀ) կողմից 2011-2012 թվականներին
իրականացվող ծրագրի մասին» N ՍՄ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման
հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝
«Շանթ» ՍՊԸ-ի երևանի մ/6-ի հետ (ՀՎՀՀ՝ 05504868) 2011 թվականի փետրվարի
24-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխայի
իրավունքների պաշտպանության վերաբերյալ սոցիալական հոլովակների տեղադրումը
«Շանթ» հեռուստաընկերության երևանյան հեռուստաթեթրում՝ 1 000 000 դրամի չափով՝
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն,
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի
Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Կատարող՝ անողջակի հարկերի բաժին, հեռ.594652



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/7.10

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

16. 03. 11թ. № 3/3.8-1/2507-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.03.11թ. N 15/15.11/3131-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. փետրվարի 18-ի N Մ-119-Ա (<<Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ>>) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի հետ, (<<Շանթ>> ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

16. 03. 11թ.
№ 034/7176-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ 4/7.10

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ ՉԻՉ/3-4/1336-11

11. 03. 11թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.03.2011թ. թիվ 15/15.11/3131-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՄՄ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Աղախյան

11. 03. 11թ.
№ 044/6596-11

4/7.11

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Մ

մարտի 2011 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

4/7.11

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-284-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱՎԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի
հայկական մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մարտի 16-ի N 3/3.8-1/2508-11, Հայաստանի Հանրապետության աշխարհաբանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի մարտի 12-ի N ՖԲ/ԱՆՄ-5/1824-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մարտի 11-ի N 03/07.2/2038-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մարտի N ԱԱ/3-4/1361-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2011 թվականի մարտի 12-ի N 01/949-11 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2011 թվականի փետրվարի 28-ի և 2011 թվականի մարտի 4-ի գրությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-284-Ա որոշմամբ (2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-723-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ լրացումները՝

1) ծրագրի 7-րդ կետում ավելացնել պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝
«Հուլիսի կամար» հասարակական կազմակերպություն: Գտնվելու վայրը՝ գյուղ Գյուլլիբուլաղ, Ամասիայի շրջան, Շիրակի մարզ, ՀՎՀՀ՝ 05525807:».

2) ծրագրի 9-րդ կետում ավելացնել 16-րդ ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝
«Հուլիսի կամար» հասարակական կազմակերպության ծրագրի նպատակն է աջակցել Ամասիայի տարածաշրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 12-18 տարեկան մոտ 100 պատանի տղաներին և աղջիկներին՝ միջին մասնագիտական հմտություններ ուսուցանելու նպատակով: Ուսուցումը կընթանա հետևյալ երեք բնագավառներում՝ կար ու ձև, խոհարարություն և կազմարարություն: 30-40 պատանիներ կստանան նաև հիմնական համակարգաչային և համացանցից օգտվելու գիտելիքներ: Դրամաշնորհը կօգնի համալրել համայնքային կազմակերպությունները, ինչպես օրինակ գրադարանը և ուսուցման կենտրոնը, սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով: Գրադարանում կբացվի գրքի կազմության արհեստանոց, որը նոր աշխատատեղեր ստեղծելու հնարավորություն կընձեռի: Ծրագիրը նախատեսում է հիմնել շարունակական համագործակցություն համայնքային

կազմակերպությունների և բիզնեսի միջև՝ վերհանելու աշխատաշուկայի կարիքները և պատրաստելու համապատասխան մասնագետներ: Ծրագրի գումարը կազմում է 24670 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010 թ. հունիս - 2011 թ. հունիս:»:

2. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված ստորև նշված եռակողմ պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդատեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558445) 2011 թվականի փետրվարի 25-ին կնքված՝ N 16822-1 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կարի մեքենաների գնում և մատակարարում՝ 1 155 000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետարաններ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/7.11

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

16.03.11թ. № 3/3.8-1/2508-11

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.03.11թ. N 15/15.11/3274-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. ապրիլի 30-ի N Մ-284-Ա («Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ») որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Արդատեկ» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

16.03.11թ.
№ 034/7175-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

4/7.11

«12» Տարբ 2011 թ.

N 3/Ք/ՇԿԸՄ-5/1824-1.

Ձեր 2011-03-10, 15/15.11/3274-11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի թիվ Մ-284-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացումներ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Տ. Բերիկյան

12.03.11թ.

№ 040/6768-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER 4/7.11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 4/7.11

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел 8 03 02, ֆաքս/факс
0010, Ереван, Главная проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07.2/2038-11 «11» Եպրպ 2011

«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.03.2011թ. թիվ 15/15.11/3274-11 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի ՈՍ-284-Ա որոշմամբ
հաստատված ծրագրում լրացումներ կատարելու և նույն ծրագրին հարակից
գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության
հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

Ա. Աղավերոյան

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄԿՐՏՅԱՆ

Անտղակի հարկերի բաժին, հեռ.594652

№ 031/6633-11

11 03. 11թ.

11. 03. 11թ.

№ 044/6652-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

4/7.11

<< 12 >> Տարբ. 2011թ.
N: 01/949-11

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՇՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր՝ 10.03.2011թ.
թիվ՝ 15/15.11/3274-11

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

ՀՀ Շիրակի մարզպետարանում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Ա-284-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացումներ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագիծը:

Ձեռք առարկում ծրագիրը որակել բարեգործական:

Հարգանքով՝

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

Հ. Արշակյան
/0312/3-16-26

12.03.11թ.
№ 116/6755



Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
Թումանյան փողոց 2-րդ փակ. տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Դեռձաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

Գործադիր տնօրեն
Լարիսա Սինայան

4 մարտի 2011թ.

4/7.11

ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պ-ն Ս. Տեր-Սիմոնյանին

Տնօրենների հորիզորդ

Գրայր Ղուկասյան
Գործող նախագահ

Ավետիք Իշխանյան
Ղավիթ Խաչատրյան
Լանա Կարլովա
Յուրի Սարգսյան
Արմեն Փիրուզյան

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի լրումն Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 28 փետրվարի 2011թ. ներկայացված նամակի, խնդրում ենք կատարել հետևյալ լրացումները ԲՀԻՕՀՀՄ-ի կողմից իրականացվող "Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման" ծրագրի 7-րդ և 9-րդ կետերում:

7-րդ կետում՝ բարեգործություն ստացողը՝
"Հույսի կամար" հասարակական կազմակերպություն
Գտնվելու վայրը՝ ցյուղ Գյուլիբուլաղ, Ամասիայի շրջան,

Շիրակի մարզ

ՀՎՀՀ՝ 05525807:

9-րդ կետում՝

"Հույսի կամար" հասարակական կազմակերպության ծրագրի նպատակն է աջակցել Ամասիայի տարածաշրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 12-18 տարեկան մոտ 100 պատանի տղաների և աղջիկների՝ միջին մասնագիտական հմտություններ ուսուցանելու համար: Ուսուցումը կընթանա հետևյալ երեք բնագավառներում. կար ու ձև, խոհարարություն և կազմարարություն: 30-40 պատանիներ կստանան նաև հիմնական համակարգչային և համացանցից օգտվելու գիտելիքներ: Դրամաշտրիք կօգնի համալրել համայնքային կազմակերպությունները, ինչպես օրինակ գրադարանը և ուսուցանան կենտրոնը, սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով: Տեղի գրադարանում կբացվի գրքի կազմության արհեստանոց, որը նոր աշխատատեղեր ստեղծելու հնարավորություն կընձեռնի: Ծրագիրը նախատեսում է հիմնել շփոթալիկական լոգոթեստ

450


Մուտքի օր
04.03.2011թ.

094/6857

համագործակցություն համայնքային կազմակերպությունների և բիզնեսի միջև՝ վերհանելու աշխատաշուկայի կարիքները և պատրաստելու համապատասխան մասնագետներ: Ծրագրի գումարը կազմում է 24,670 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. հունիս – 2011թ. հունիս:

Հարգանքներով,

Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն



Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան
Թումանյան փողոց 2-րդ փակ: տուն 7/1, Երևան, 375002 Հայաստան • Գեո/Ֆաքս (374-10) 533862, 536758
• E-mail: info@osi.am • www.osi.am •

4/7.11

Գործադիր տնօրեն
Լարիսա Մինասյան

28 փետրվարի 2011թ.

ՀՀ կառավարության
բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի
նախագահ
պ-ն Ս. Տեր-Մինոնյանին

Տնօրենների խորհուրդ

Հարգելի պարոն Տեր-Մինոնյան,

Հրայր Ղուկասյան
Գործող նախագահ


Ավետիք Իշխանյան
Ղավիթ Խաչատրյան
Լանա Կարլովա
Յուրի Սարգսյան
Արմեն Փիրուզյան

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի «Հուլիս կամար» հասարակական կազմակերպությանը հատկացվել է դրամաշնորհ, որը նախատեսում է Ամասիայի շրջանի երիտասարդության մրցունակության բարձրացում՝ մասնագիտական կրթություն՝ կար ու ձև, խոհարարություն և կազմարարություն ուսուցանելով: Այդ նպատակով եռակողմ պայմանագիր է կնքվել ԲՀԻՕՀՀՄ-ի, «Հուլիս կամար» հասարակական կազմակերպության և «Արդատեկ» ՍՊԸ-ի միջև կարի մեքենաների ձեռքբերման վերաբերյալ: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 1,386,000 (մեկ միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ, որտեղ ԱԱՀ-ն կազմում է 231,000 (երկու հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ:

Համաձայն «ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. ապրիլի 30-ի թիվ Մ 284-Ս» որոշման, խնդրում ենք նշված գործարքը դիտարկել որպես «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» բարեգործական ծրագրի հարակից գործարք և ազատել ԱԱՀ-ի վճարումից:

Հարգանքներով,

Լարիսա Մինասյան
Գործադիր տնօրեն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ապրիլի 2010 թվականի N 5 284
քաղ. երևան

ԲԱՅ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՂՈՐԲԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱԺԱՄԻ ՀԱՐԹԱՀԱՐՄԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 20-ի N 3/3.8-1/2205-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի ապրիլի 12-ի N 471-10, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի փետրվարի 16-ի N Ե2010-1338, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2010 թվականի փետրվարի 15-ի N 03/07.2/829-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մարտի 26-ի N 12/8-22-1797, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամտունների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 19-ի N 11585/3-6, Երևանի քաղաքապետարանի 2010 թվականի փետրվարի 11-ի N 02/50-1894h, ՀՀ Արարատի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 030/203, ՀՀ Արմավիրի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 15-ի N 365, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 19-ի N Ա-1-137, ՀՀ Լոռու մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 17-ի N 004/387-01, ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 01/14.2/392-10, ՀՀ Շիրակի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 18-ի N 01/433-10, ՀՀ Սյունիքի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 11-ի N 09-201, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 15-ի N 01/07.3/243-10 և ՀՀ Տավուշի մարզպետարանի 2010 թվականի փետրվարի 16-ի N 17.4/18910 եզրակացությունները, ո թ ո շ ու մ է.

1. Բարեգործական որակել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Թումանյան 2-րդ փակ., տուն 7/1, ՀՎՀՀ՝ 02535097) իրականացվող՝ մոտ 2000000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային և մաքսային արտոնությունները կարող են տրամադրվել՝
1) ծրագրի կազմակերպչական ծախսերի շրջանակներում իրականացված գործարքների կապակցությամբ՝ դրանք որպես հարակից գործարք որակելու դեպքում:
2) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրով նախատեսվող ծրագրերի շրջանակներում գործարքների կապակցությամբ այդ ծրագրերը բարեգործական որակելու դեպքում:

3. Առաջարկել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին՝
1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.
2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամտունների կոմիտե, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարան և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարան



Մ. ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆ
4/7/11

«3» մայիսի 2010թ.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրանքի հայկական մասնաճյուղի
 կողմից իրականացվող «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հարթափարման աջակցման»

Օ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	<p>«Բաց հասարակության ինստիտուտ»-ը նախաձեռնել և իրականացնում է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հարթափարման աջակցման ծրագիր» նախկին Խորհրդային Միության, Արևելյան Եվրոպայի և Բալկանյան մի շարք երկրներում: Այս ծրագրի համար հատկացվել է 100 մլն. ԱՄՆ դոլար, որն ուղղված է աջակցելու 20 երկրում, այդ թվում և Հայաստանում, գլոբալ ֆինանսական ճգնաժամի արդյունքում սոցիալական ուղրտում, ինչպես նաև խոցելի խավերի մոտ առաջացած հրատապ խնդիրների հարթափարմանը: Երկրներում ֆինանսավորումը կատարվելու է «Բաց հասարակության ինստիտուտ»-ի տեղական հիմնադրամների միջոցով՝ հատուկ ընթացակարգի համաձայն: Հայաստանին նախատեսվում է տրամադրել մինչև 2 մլն ԱՄՆ դոլար՝ երկու տարվա ընթացքում – 2010 – 2012թթ.:</p> <p>Ծրագրի նպատակն է տրամադրել մարդասիրական օգուտներ հասարակության սոցիալապես անապահով և խոցելի անդամներին և նրանց համար ապահովել կենսական նշանակություն հիմնական ծառայությունների մատչելիությունը: Ծրագիրն աշխատում է ճկուն մեխանիզմով: Այն կարող է ֆինանսավորել անձնատարբեր մախաձեռնություններ, ինչպես օրինակ՝ օժանդակություն միայնակ ծերերին ձմռան ամիսներին բնակարանների ջեռուցման ապահովման խնդրում, աջակցություն դպրոցներում սննդի կազմակերպման հարցում, իրավաբանական աջակցություն և վերապատրաստման դասընթացներ նոր գործազուրկների համար, և այլն: Ֆինանսավորման պարտադիր պայման է համոզիամուն համաֆինանսավորման առկայությունը՝ պահանջվող գումարի 30-50% չափով:</p>
-------------------	---

2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	<p>Այնպիսով է հարկային արտոնությունների ստացում՝ սննդամթերքի, վառելիքի, էլեկտրաէներգիայի, ուսումնական միջոցների, տրանսպորտային ծախսերի վճարման ԱՄՆ-ից ազատում: Ապրանքների, սարքավորումների ներմուծման և ձեռքբերման դեպքում մաքսային վճարներից և ԱՄՆ-ից ազատում, ինտաիտուտային կապի ծառայությունների վարձավճարների ԱՄՆ-ից ազատում, տպագրական ծախսերի ԱՄՆ-ից ազատում, ավտոմեքենայի և պահեստամասերի ձեռքբերման հետ կապված մաքսավճարների և ԱՄՆ-ից ազատում:</p>
3. Բարեգործը	<p>Ֆինանսավորումը կատարվում է Բուրբակեշտի (Հունգարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից տրամադրված միջոցների հաշվին:</p>
4. Ծրագրից կատարողը	<p>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ Գործող հասցե՝ Թումանյան 2-րդ փակուղի, տ. 711, Երևան 0002, հեռ. 533862, 536758 Իրավաբանական հասցե՝ Արամի 44 ՀՀԳՀ 02535097</p>
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	<p>Ծրագիրը իրագործվում է Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում՝ կրթության, առողջապահության, սոցիալական ոլորտներում:</p>
6. Ծրագրի բյուջեն	<p>ԲՀԻՕՀՀՄ-ի «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հարթափարման աջակցման» ծրագրի գումարը կազմում է մոտ 2,000,000 ԱՄՆ դոլար՝ երկու տարվա կտրվածքով: Ֆինանսավորումը կատարվում է Բուրբակեշտի (Հունգարիա) Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի կողմից: Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղին տրամադրված միջոցներով: Գումարների տրամադրումը ԲՀԻՕՀՀՄ-ին կատարվելու է ըստ ծրագրերի նպատակայնության և կադրիքի հիմնավորվածությամբ:</p>
7. Բարեգործություն ստացողը	<p>Երևանի և Հայաստանի բոլոր մարզերի խոցելի խավերի ներկայացուցիչներ՝ սոցիալապես անապահով երեխաներ, ծերեր, հաշմանդամներ, գործազուրկներ, փախստականներ, անապահով բազմազավակ ընտանիքներ, սոցիալապես խոցելի ուսանողներ, սահմանաձեռն համայնքի բնակիչներ, սոցիալապես խոցելի վիճակում գտնվող ընտանիքներ, դպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներ: Շատառուների ցուցակները կտրամադրվեն տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում ծրագրեր իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից: Բարեգործություն ստացողներ են նաև հետևյալ կազմակերպությունները՝ «Համայնքարանձակ կրթությամբ կանանց ասոցիացիա» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Սարյան 22, ք. Երևան 0002 ՀՀԳՀ 01512224 Երևանի խոսքի ծամր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ դպրոց</p>

հավելյալ փայտ) ծախսերը: Փոխհատուցվելու է 770 մեթրի ջեռուցման ծախսերը: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ դեկտեմբեր 2009 - ապրիլ 2010թ.

5. Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի «Ջանգալատուն» ծրագրի նպատակն է աջակցել աղքատության մեջ հայտնված, մարզինալացված կամ այլ կերպ խոցելի դարձած ընտանիքների՝ մասնավորապես հոգավոր երեխաների կարիքները և ընտանիքներին տրամադրելով բազմակողմանի վերականգնողական ծառայություններ: Երևանի և Վանաձորի սոցիալ-հոգեբանական, կրթական աջակցության կենտրոնները ընդլայնում են իրենց շահառուների շրջանակը՝ յուրաքանչյուրը մատուցելով ծառայություններ 75 ընտանիքի (ընդամենը 150 ընտանիք, նախկին 92 ընտանիքի փոխարեն): «Ջանգալատուն»-ն աջակցում է համայնքների գարգացմանը՝ հզորացնելով ընտանիքը և հատկապես հոգավոր երեխաների կարիքները: Ծրագրի գումարը կազմում է 90,478 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ հունվար 2010թ. - հունվար 2011թ.

6. Սի.Օ.Եյ.Էֆ մանուկների բարեգործական հիմնադրամի ծրագրի նպատակն է ամբիջական աջակցության տրամադրումը Արմավիրի և Արագածոտնի մարզերի Արզիմա, Շենիկ, Քարակերտ, Դալարիկ, Սյամսիկյան, Լեռնազոզ, Դուշակերտ և Արրենի գյուղերի 104 սոցիալապես անապահով ընտանիքների (566 անձ): Ծրագիրը տրամադրելու է առաջին ամիսամեջը տրամադրված սնունդ և հիմնական դեղամիջոցներ՝ կանխելու ծննդվա ամիսներին հատուկ հիվանդացության և մահացության ռիսկերի աճը: Ծրագրի գումարը կազմում է 24,500 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը՝ հունվար 2010 թ. - մայիս 2010թ.

7. Զինիշյան հիշատակի հիմնադրամի ծրագրի նպատակն է բարելավել ֆերմերների տնտեսական փիճակը՝ աջակցելով Արմավիրի, Արագածոտնի, Արարատի, Վայոց Ձորի և Լոռու մարզերում գործող տաս գյուղատնտեսական ֆերմերային միավորումներին՝ հարթահայրելու գյուղալ ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները՝ իրենց գործունեության վրա: Մինչև 5000 ԱՄՆ դոլար արժույթյամբ դրամաշնորհներ են տրամադրվելու տաս ֆերմերային կոոպերատիվների, որոնցից յուրաքանչյուրը կազմված է 45-50 ֆերմերներից, այսինքն՝ ծրագրի ամբողջական շահառուների թիվը կազմում է 450-500 ֆերմեր: Ծրագրեր են ֆինանսավորվելու ուղղված գյուղատնտեսական արքայությունների համալրմանը, պարարտանյութերի ձեռքբերմանը, բարձրարժեք մշակաբույսերի արտադրության և օրգանական գյուղատնտեսության զարգացմանը, ագրոտեխնոլոգիայի ուսուցմանը, և այլն: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Իրականացման ժամկետը մարտ 2010 թ - դեկտեմբեր 2010 թ.

8. «Առաքելություն Ջայաստան» հասարակական կազմակերպության ծրագրի նպատակն է տրամադրել տաք կերակուր սոցիալապես անապահով 3,000 շահառուի շարքայական 5 օր գրաֆիկով 7 մարզում՝ Կոտայք, Արարատ, Շիրակ, Գեղարքունիք, Սյունիք, Լոռի, Տավուշ և

Երևանում գործող 25 ճաշարանների և ցերեկային խնամքի կենտրոնների միջոցով, ինչպես նաև տրամադրել սոցիալական և առողջապահական ծառայություններ 6,000 շահառուի: Դրամաշնորհի օգուտյամբ մի շաբթ գործող ճաշարաններ, որոնք կանգնած էին փակվելու վտանգի առջև, այժմ շարունակում են ծառայություններ մատուցել իրենց շահառուներին: Ծրագրի գումարն է 199,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. ապրիլ - 2011թ. ապրիլ:

9. «Անարատ հողության հայ բույրերի միաբանության Տիրամայր Ջայաստանի կուսաստան» ծրագրի նպատակն է ամառային ճամբար հաճախող տարեկան ալելի քան 800 կարիքավոր երեխայի համար ապահովել համազոր ամբողջ տարվա ընթացքում՝ տեղային քնուցան հարմարությունների օգտագործումը՝ աճող տարվա ընթացքում՝ հնարավոր դարձնել ճամբարի համակարգի տեղադրման միջոցով: Այն հնարավոր կհարձակ ճամբարի գործունեությունը ողջ տարվա ընթացքում՝ ալելացնելով ճամբար հաճախող սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների թիվը, ինչպես նաև, խնայել էլեկտրաէներգիան և զգալիորեն նվազեցնել համապատասխան ծախսերը: Ծրագրի գումարը կազմում է 66,824 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս - 2010թ. մայիս:

10. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրեր Ջայաստանի ծրագրի նպատակն է ապահովել կրթության հավասար պայմանների մատչելիություն կարիքավոր ուսանողների համար, ովքեր ուզում են ձեռք բերել միջին մասնագիտական կրթություն: Ծրագիրը կհոգա Տավուշի բարձր առաջադիմություն ցուցաբերող 50 կարիքավոր ուսանողների ուսման հետ կապված ծախսերը (ուսման վարձ, ուսումնական նյութեր և տրանսպորտ): Շահառու ուսանողները կընդգրկվեն Տավուշի մարզում գործող 6 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից: Ծրագրի գումարը կազմում է 13,108 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. ապրիլ - 2011թ. դեկտեմբեր:

11. «Ինքրաիտք ինքնընչել, Ինք» Շնկերության Ջայաստանյան Ներկայացուցչության ծրագրի նպատակն է բարելավել մայրերի և երեխաների առողջությունը Ջայաստանի գյուղական հեռավոր համայնքներում: Ծրագրի ընթացքում առաջին ամիսամեջը տրամադրված կառուցվածքները կառուցված թվով 4000 մանկաբարձական փաթեթ կտրամադրվի 11 մարզային ծննդատների: Փաթեթները կօգտագործվեն ծննդօգնության նպատակով: Ծրագրի գումարը կազմում է 14,400 ԱՄՆ դոլար:

Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս - 2010թ. դեկտեմբեր:
12. Երևանի կրթության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի ծրագրի նպատակն է կազմակերպել 20-օրյա ամառային համգիտա երևան քաղաքի չորս հատուկ դպրոցների 7-13 տարեկան 120 երեխայի համար: Ծրագիրը նպատակն է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնտեգրմանը հասարակություն: Երևան շրջան կարողությունների զարգացման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրների և կարողությունների վերաբերյալ հանրակրթական

<p>Գտնվելու վայրը՝ 3. Ներսիսյան 3, ք. Երևան 3433՝ 00008415 Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն Գտնվելու վայրը՝ Քաջազմուհի 12, ք. Երևան 3433՝ 01518806 Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հասուկ կրթահամալիր Գտնվելու վայրը՝ Նոյրի այգիներ 193, ք. Երևան 3433՝ 01504672 «Օրդան» բարեգործական հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Եկմայան 1-ին փող., տ. 6, ք. Երևան 0002 3433՝ 02552842 «Հայկական Կադիտաս» բարեփիրական հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ 3. Սարգսյան փող., նրբ. 3, տուն 8, ք. Գյումրի 3118 3433՝ 05514397 Թուֆենկյան բարեգործական հիմնադրամ Գտնվելու վայրը՝ Մ. Խորենացի 2, բն. 10, ք. Երևան 0015 3433՝ 02570903 Մի.Օ.Է.Էֆ մանուկների բարեգործական հիմնադրամ Գտնվելու վայրը՝ Փ. Բուզանդ 53-55, ք. Երևան 0010 3433՝ 02569972 «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամ Գտնվելու վայրը՝ Արուսյան 34, բն. 5, ք. Երևան 0009 3433՝ 00060436 «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպություն Գտնվելու վայրը՝ Գ. Նժդեհի 42, ք. Երևան 0061 3433՝ 02214646 «Անարատ հողության հայ քույրերի միաբանության Տիրամայր Հայաստանի կուսաստան» Գտնվելու վայրը՝ 2արենցի 6, Անի թաղամաս, ք. Գյումրի, Շիրակի մարզ ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրեր Հայաստան Գտնվելու վայրը՝ Դ. Արամյան 14, ք. Երևան 0010 «Ինթերահեյթ Ինթերնեյշն Ինք» ՇՆկերության Հայաստանյան ներկայացուցչություն Գտնվելու վայրը՝ Ջարոթյան 28, ք. Երևան 3433՝ 02558676</p>	<p>4/2-11</p>
---	---------------

<p>8. Ծրագրի իրականացման տևողությունը</p>	<p>Արմավիրի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց Գտնվելու վայրը՝ Գորկու փ., V նրբ. 14շ., ք. Արմավիր 3433՝ 04407681 Ծրագիրը կիրականացվի 2010 թվականի հունվարի 1-ից մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31:</p>
<p>9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</p>	<p>1. «Օրդան» բարեգործական հասարակական կազմակերպության ծրագրի նպատակն է վանաձորում ստեղծել երեխաների ցերեկային խնամքի կենտրոն: Կենտրոնը 50 բախտող և կարիքավոր դպրոցահասակ երեխայի դպրոցից անմիջապես հետո տրամադրում է օրական տաք և առողջարար սնունդ, օգնում է տնային աշխատանքները կատարելիս, բժշկական, առանձնաբուժական, հոգեբանական ծառայություններ է մատուցում և կազմակերպում է արտաժամյա միջոցառումներ, ներառյալ մշակութային միջոցառումներ և պարաօլիմպիկ փայտագործության, ծաքրամեխ, ասեղնագործության և կավագործության խմբակներում: Ծրագրի գումարը կազմում է 74,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2009թ. հոկտեմբեր – 2010թ. հոկտեմբեր:</p> <p>2. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, Խոսքի խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 դպրոցի և Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի ծրագրի նպատակն է փոխհատուցել տրանսպորտային ծախսերը ապահովելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 90 երեխայի համախումբ կրթական հաստատություններ 2009-2010 ուսումնական տարվա ընթացքում: Ծրագրի գումարը կազմում է 12,870 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2009թ. հոկտեմբեր - 2010թ. հունիս:</p> <p>3. Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի ծրագրի նպատակն է աջակցել մարզերի սոցիալապես անապահով ընտանիքներին, որոնք ունեն նորափններ: Տալուշի մարզի 120 ընտանիք ստացել է մեկական փաթեթ, որը պարունակում է մինչև 1 տարեկան երեխաների համար նախատեսված հագուստի և հիգիենայի առաջին անհրաժեշտության պարագայով: Նախաձեռնության մասին կատարաստվի և համարային հեռուստատեսության կենտրոնավի ֆիլմ: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2009թ. հոկտեմբեր - 2010թ. հունիս:</p> <p>4. Հայկական Կարիտաս, բարեփիրական հասարակական կազմակերպության ծրագրի նպատակն է միայնակ ծերերի շրջանում նվազեցնել մահացության աստիճանը, որը ձուռան ամիսներին միտում ունի աճելու՝ կապված ցրտից բխող հիվանդությունների աճի հետ: Ծրագիրը նախատեսում է ապահովել Գյումրիի, Վանաձորի, Ռավառի և Տաշիրի 560 միայնակ և հաշմանդամ ծերերի բնակարանների ջեռուցումը՝ փոխհատուցելով ջեռուցման (գազ, էլեկտրամեքիկա,</p>

	<p>դպրոցների սաների իրազեկվածության բարձրացման միջոցով: Ամառային հանգիստը կազմակերպվելու է Հանքավանի "Լուսաբաց" ճամբարում՝ 2010 թ. օգոստոս ամսին: Ծրագրի գումարը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս – 2010թ. սեպտեմբեր:</p> <p>13. Երևանի բժշկահոգեբանամեկավարժական գնահատման կենտրոնի ծրագրի նպատակն է կազմակերպել ամառային ճամբար 45 օր տևողությամբ 120 մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար Ստեփանավանում: Ճամբարը ապահովելու է 40 երեխայի հանգիստ 15 օր տևողությամբ՝ 3 հերթով: Երեխաները ընտրվելու են Հանքավանում բոլոր մարզերի հատուկ կարիքներով երեխաների համար դպրոցներից: Ճամբարի շահառու երեխաները լինելու են սոցիալապես առավել անապահով ընտանիքներից, որոնք հ կիճակի են որոշ ժամանակ մնալ առանց ծնողների ներկայության: Ծրագիրը նպատակ ու է նրանց սոցիալ-հոգեբանական վերականգնմանը: Ծրագրի գումարը կազմում է 21,472 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս – 2010թ. սեպտեմբեր:</p> <p>14. Կրմավորի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցի ծրագրի նպատակն է նպաստել Կրմավորի մարզում ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների կրթական պրոցես լիարժեք ինտեգրվելուն: Ծրագրով նախատեսվում է միկրոպլանովումներ ձեռքբերում, որը կապահովի մտավոր և ֆիզիկական որոշ անկարողություններ ունեցող երեխաների դպրոց հաճախելը տեղափոխելով նրանց տնից դպրոց և դպրոցից տուն: Այդ երեխաների սոցիալական և հոգեբանական առավել լիարժեք զարգացածությունը ապահովելու համար Ծրագրով նախատեսվում է մաս կալվագործության խմբակի հիմնում դպրոցում, որը ներառում է կալվաթոճման արդի ձեռքբերում և համապատասխան տարածքի վերականգնում: Ծրագրի գումարը կազմում է 20,000 ԱՄՆ դոլար: Ծրագրի իրականացման ժամկետն է 2010թ. մայիս – 2010թ. դեկտեմբեր:</p> <p>Ձեռք են բերվելու վառելիք և տրանսպորտային միջոցներ, սննդամթերք, տարածքի վարձակալում, հաղորդակցման միջոցներ՝ հեռախոս, ինտերնետ, ուսումնական միջոցներ, առաջին անհրաժեշտության կենցաղային պարագամեր սոցիալապես անապահով ընտանիքներին, ծնրերին, նորածին երեխաներին:</p>
<p>10. Ձեռք բերվող (ներմուծվող) ավարանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական</p>	<p>2010 – 2012 թթ. ԲՀԻՕՐՀՄ-ն «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հարթահարման աջակցման» ծրագրի արդյունավետ իրականացման համար ամհրաժեշտ է ձեռք բերել ավտոմեքենա և պահեստամասեր, որոնց գինը կազմում է 25,000 ԱՄՆ դոլար: Կազմակերպությունը և երկիրը, որտեղից կներմուծվի ավտոմեքենան պարզ կրտանա անցկացված մրցույթի և ստացված հայտերի</p>
<p>ծախսերը</p>	<p>արդյունքում:</p> <p>Մեքենայի անհրաժեշտությունը պայմանավորված է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հարթահարման աջակցման» ծրագրի հատկացված միջոցների բաշխման, մոնիտորինգի համար կատարվող աշխատանքների, ինչպես նաև, Երևան և մարզեր շրջայցեր կատարելու համար: «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հարթահարման աջակցման» ծրագրի ավարտից հետո ձեռք բերված ավտոմեքենան կծառայի ԲՀԻՕՐՀՄ-ի ծրագրային նպատակների իրականացման համար:</p> <p>Ավելարկում է միջազգային, տեղական, բջջային հեռախոսակալի ծախսեր մոտ 8,800 ԱՄՆ դոլար (մեկ տարվա համար), որից 2,800 ԱՄՆ դոլարը միջազգային և տեղական հեռախոսակալի ծախսերն են, իսկ 2,000 ԱՄՆ դոլարը կազմում են բջջային հեռախոսակալի ծախսերը՝ կնքված են պայմանագրեր «Արմենտել» ՋՉ ՓԲԸ-ի հետ: Ինտերնետ կապի ապահովման համար կնքվել է պայմանագիր ԲՀԻՕՐՀՄ-ի և «Արմենիան Ղեկաբեր Քամիին» ՓԲԸ-ի միջև՝ 4,000 ԱՄՆ դոլար գումարով:</p> <p>Կյափիտով, երկու տարվա կտրվածքով ԲՀԻՕՐՀՄ-ի Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպչական ծախսերը կազմում են 42,600 ԱՄՆ դոլար, որը կազմում է «Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հարթահարման աջակցման» ծրագրի ընդհանուր գումարի 2,1%:</p> <p>ԲՀԻՕՐՀՄ-ն ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցում է՝</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական կառավարման, հիմնականում կառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<ul style="list-style-type: none"> • ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ՝ հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաներին տրանսպորտի/կառնիքի տրանսպորտի ծրագրում • ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, տեղական իշխանությունների և ԱՄՆ-ի Միջազգային գաղափարային կազմակերպության հետ, «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի՝ «Սննդի, սոցիալական և առողջապահական ծառայությունների տրանսպորտի ք. Երևանի և Հայաստանի 7 մարզերի 6,000 շահառուներին» ծրագրի շրջանակներում • Սի. Օ. Էյ. Էֆ. Սմոնկների բարեգործական հիմնադրամի հետ, «Սնունդ և հիմնական ռեզիմիտոցներ Կրմավոր մարզի սոցիալապես խոցելի գյուղացիներին» ծրագրի շրջանակներում • Թու.Ֆենկյան բարեգործական հիմնադրամի հետ՝ «Ձանգակատուն» ծրագրի իրականացման շրջանակներում • ԱՄՆ-ի Միջազգային գաղափարային կազմակերպության հետ՝ «Ամառային ճամբար-Ջեռուցման համակարգի տեղադրում» ծրագրի շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի գյուղական հեռավոր համայնքներում մայրերի և երեխաների տառիչության բարելավման

4/7/11



4/7.11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
29 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 723 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՂՐԻԼԻ
30-Ի N Մ-284-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿԵՐՈՒՄ
ԲԵՌԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական
մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 6-ի N 3.8-2/6588-10 և
Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական
եկամտնների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի N ԱԱ3-6/1619-10
եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Բաց հասարակության
ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի 2010
թվականի հոկտեմբերի 22-ի գրությունը, որ ու շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-284-Ա
որոշմանը կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) ծրագրի 8-րդ կետում «մինչև 2011 թվականի դեկտեմբերի 31» բառերը
փոխարինել «մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31» բառերով.

2) ծրագրի 9-րդ կետում ավելացնել 15-րդ ենթակետ հետևյալ
բովանդակությամբ՝

«Գլոբալ տնտեսական ճգնաժամի հաղթահարման աջակցման» ծրագրի
շարունակական վերահսկողության և գնահատման միջոցառումները
իրականացվելու են ծրագրի ողջ տևողության ընթացքում՝ 2010 թ. հունվար – 2012 թ.
դեկտեմբեր, մշտապես կատարվող այցելությունների և համակարգված
դիտարկումների միջոցով: Այդ նպատակով ծրագրի կազմակերպչական ծախսերի
շրջանակներում ձեռք է բերվելու ավտոմեքենա:».

3) ծրագրի 11-րդ կետում «25 000 ԱՄՆ դոլար» բառերը փոխարինել «30 000
ԱՄՆ-ի դոլար» բառերով, իսկ «42 600 ԱՄՆ դոլար» բառերը փոխարինել «47 600 ԱՄՆ
դոլար» բառերով:

